ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2019/62, 27.08.2019թ.

Բողոք բերող անձ՝ «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ» հրատապ բաց մրցույթ

Գնման առարկան՝ Ոստիկանության կարիքների համար տրանսպորտային միջոցներին հատկացվող հաշվառման վկայագրերի անձնավորեցման համար օժանդակ պարագաների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

1. Ընդունել և ուսումնասիրել «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի ներկայացված առաջարկը:
2. Վերանայել ՀՀ Ոստիկանության կողմից տրանսպորտային միջոցներին հատկացվող հաշվառման վկայագրերի անձնավորեցման համար օժանդակ պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.08.2019 թ., ժամը 12:00-ի նիստի Արձանագրություն 2-ի որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ.ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
Ի պատասխան 27 «օգոստոսի» 2019թ.-ի գրությանը

Բողոք ներկայացնող անձ- «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ, ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 22, y-gabrielyan@informaticssolution.com, հեռ: 060 83 00 88:

Պատվիրատու – ՀՀ Ոստիկանություն, Նալբանդյան 130:

Գնման ընթացակարգի ծածկագիրը, առարկան՝ ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ ծածկագրով բաց մրցույթ, ՀՀ Ոստիկանության կարիքների համար տրանսպորտային միջոցներին հատկացվող հաշվառման վկայագրերի անձնավորեցման համար օժանդակ պարագաների ձեռքբերման նպատակով:

Բողոքի պահանջը՝

1. Ընդունել և ուսումնասիրել «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի ներկայացված առաջարկը:
2. Վերանայել ՀՀ Ոստիկանության կողմից տրանսպորտային միջոցներին հատկացվող հաշվառման վկայագրերի անձնավորեցման համար օժանդակ պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.08.2019 թ., ժամը 12:00-ի նիստի Արձանագրություն 2-ի որոշումը:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ սույն թվականի օգոստոսի 2-ին ՀՀ Ոստիկանության կողմից հայտարարվել է՝ ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ ծածկագրով՝ ՀՀ Ոստիկանության կարիքների համար տրանսպորտային միջոցներին հատկացվող հաշվառման վկայագրերի անձնավորեցման համար օժանդակ պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված հրատապ բաց մրցույթ: Հայտարարված մրցույթին հայտ է ներկայացրել նաև «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ն՝ 2-րդ չափաբաժնով / CPV կոդ 22981310/508, Վարորդական վկայականների և տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի տպագրման համար թափանցիկ պաշտպանիչ թաղանթ/: Նշենք, որ Ընկերությունը օգոստոս 16-ին շարունակ փորձել է մուտքագրել պահանջվող փաստաթղթերը, սակայն ցանցային և համակարգային խնդիրների պատճառով բեռնված ֆայլերը հնարավոր չի եղել մուտքագրել:

Որից հետո քաղաքացի Յուրիդա Գաբրիելյանը, ով իրականացնում էր Ընկերության առցանց էլեկտրոնային գնումներին մասնակցությունը, պատրաստ ունենալով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ 2019 թվականի օգոստոսի 19-ին շփոթմամբ հայտը ներկայացրել է մեկ այլ պրոֆիլ մուտք գործելով, որից հետո՝ Յուրիդա Գաբրիելյանը ստուգելով ներկայացված հայտը՝ հայտնաբերել է ֆայլի անհասանելիությունը, սակայն բավարար ժամանակ չունենալով հնարավորություն չի եղել սրբագրելու մուտքագրված սխալը, որի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդված 1-ին մասի 3-րդ կետը:

Գրությանը կցվում են պահանջվող փաստաթղթերը:

«Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ
Տնօրեն՝
Ռոլանդ Դանիելյան
26.08.2019թ.

ՍՏԱՑՎԱԾ
N V-38534-19
27.08.19